

ՀՏԴ 037

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

**ԽԱՂԻ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ «ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ»  
ԴԱՍԸՆԹԱՑԻՆ**

**Նալբանդյան Մ. Է., Ամազարյան Ա. Ն.**

Տարրական դպրոցի 2-4-րդ դասարաններում դասավանդվող «Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասավանդման պրոցեսը ավելի հեշտընկալելի կդառնա դասավանդման ինտերակտիվ մեթոդների, հատկապես խաղի մեթոդի կիրառմամբ: Գրեթե բոլոր թեմաները ներկայացվել են առավել հարմար խաղերով:

**Բանալի բառեր.** մանկավարժական խաղ, խաղի մեթոդ, մրցույթ, բնություն, շրջակա միջավայր, մակերևույթ, քարտեզ, հասարակություն, տնտեսություն, սնունդ, առողջություն, ճանապարհորդություն:

Աշխատանքի նպատակն է առաջարկել մեթոդներ և մոտեցումներ, որոնց միջոցով հնարավոր կլինի դասընթացը դարձնել ավելի հեշտ ընկալվող, գրավիչ, հետաքրքիր: Այդ ամենին հասնելու համար ընտրել են առավել հարմար հնարքներ՝ հաշվի առնելով նաև առարկայական չափորոշիչները, դասագրքի ընձեռած հնարավորությունները, վերապատրաստման դասընթացների նյութերը, առկա հանրամատչելի մասնագիտական գրականությունը, ինչպես նաև թեմատիկ տեսաֆիլմերը, դիդակտիկ տարբեր պարագաները և միջոցները:

Դասընթացի առանձնահատկություններից էլնելով՝ կարևորում ենք աշխատանքում առաջարկվող տարբեր խաղերի միջոցով ներկայացնել նյութերը գիտական, մատչելի, հետաքրքիր և հազեցած՝ հիմնավորելով ընտրված թեմայի արդիականությունը:

Առաջարկվող խաղ-դասերը բազմիցս փորձարկվել են 2-4-րդ դասարաններում և ունեցել են բարձր արդյունավետություն: Նյութերի մշակումն ու դիտարկումը կատարվել են «Տարրական մեթոդիկա» 4-րդ կուրսի ուսանողների հետ՝ «Բնագիտություն և շրջակա աշխարհը» դասընթացին:

«Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացը կոչված է օգնելու երեխային ճանաչելու իրեն ոչ միայն որպես անհատի, այլև որպես հասարակության անդամի: Դասընթացի օգնությամբ կրտսեր դպրոցականը սկսում է «կառուցել» իր սեփական աշխարհը՝ գծելով իր պատկերացումների, զգացողությունների, մտքերի ու նախասիրությունների շրջանակը [5]:

Տարրական դպրոցի 2-4-րդ դասարաններում դասավանդվող «Ես և շրջակա աշխարհը» առարկայի նպատակն է աշակերտներին ծանոթացնել բնությանը, հաղորդակցվել և համագործակցել միջավայրի հետ, նպաստել սեփական երկրի պատմամշակութային արժեքների ժառանգորդը լինելու գիտակցման ձևավորմանը և, իհարկե, ճանաչել իրեն ու իր սեփական օրգանիզմը:

Դասընթացը բավականին բարդ է, հարուստ մեծածավալ տեղեկատվությամբ հագեցած դասերով: Այդ պատճառով պետք է նյութի մատուցումը լինի չափազանց գրավիչ, գիտական և մատչելի:

Այս պարագայում ուսուցչի լավագույն օգնականներն են դառնում ճիշտ ընտրված մեթոդները:

Մատուցման առավել հեշտ, ընկալելի մեթոդներից է խաղը, որը դասի ոչ ավանդական ձևերից է:

Խաղը երեխայի հիմնական գործունեությունն է:

Ս. Լ. Ռուբինշտեյնը նշել է, որ խաղը պահպանում և զարգացնում է մանկականը երեխաների մեջ, դա նրանց կյանքի դպրոցն է և պրակտիկայի զարգացումը:

**Խաղը գործողություն է, որ կատարվում է հաճույքի համար, իսկ երբեմն էլ օգտագործվում որպես ուսուցողական գործիք: Խաղը աշխատանք չէ, սակայն խաղի և աշխատանքի միջև սահմանը հստակ չէ, և որոշ խաղեր համարվում են աշխատանք և հակառակը:**

Խաղը նաև կյանքի մոդել է, որի միջոցով երեխաները ճանաչում և մուտք են գործում «մեծերի աշխարհը»:

Խաղային մանկավարժությունը մանկավարժության մի բաժին է, որում մանկավարժական գործընթացում կարևորվում են խաղերը [7]:

Մանկավարժական խաղերը կատարում են հետևյալ գործառույթները՝ զարգացնող, զվարճացնող, ուսուցանող, հաղորդակցական, հանգստացնող, ինքնարտահայտման [9]:

Խաղի դրդապատճառը ինքնին գործընթացն է, ոչ թե արդյունքը: Երեխան խաղը ընկալում է որպես ինքնադրսևորման և ինքնաարտահայտման միջոց:

Խաղի կազմակերպման պահանջներն են՝ երեխաների ազատություն ու կամավոր մասնակցություն, գործողությունների իմաստի համապատասխանությունը իրական իրավիճակում պահվածքի հետ, կանոնների ու էության իմացություն: Խաղի վերջում կատարվում է վերլուծությունը, որից հետո կարելի է վերանայել խաղի բովանդակությունն ու կանոնները [8]:


Խաղերի ընդհանուր պատկերը հետևյալն է.

- Խաղին բնորոշ են մրցումը, կարգուկանոնը, տարերայնությունը, հորինումը և ազատությունը:
- Խաղերը կազմված են 3 փուլից. նախապատրաստական, խաղի ընթացք և ավարտ՝ պարտություն և հաղթանակ, մեր դեպքում՝ գնահատում:
- Խաղերում կարևորվում են խաղի կանոններին ծանոթացնելը, ինչպես նաև խաղի ինտելեկտուալ, իմացական-ճանաչողական բնույթի ընկալումը [4]:

Դասընթացի 2 դասարանի դասերի թեմաները հիմնականում նպատակ ունեն բացահայտել անձին, նրա նախասիրությունները, նպատակները, սովորությունները, նրա փոքր և մեծ ընտանիքը, իրավունքներն ու պարտականությունները, համակեցության կանոնները: Ճանաչել և հոգատար վերաբերմունք դրսևորել շրջապատի նկատմամբ, պահպանել և ներդաշնակ ապրել բնության և նրա բաղադրիչների հետ, ինչպես նաև իմանալ առողջ սնունդի, հիգիենայի կանոնների, վտանգավոր սովորությունների մասին, կարողանա խուսափել վարակներից, գիտենալ երթևեկության կանոնները:

1-12-ի դասին աշակերտը պետք է կարողանա ներկայացնել իրեն: Դրա համար շատ հարմար է «տեղեկագրքի» ստեղծումը «Արի ծանոթանանք» վերնագրով: A4 չափի սովարաթղթի վրա 6 բաժիններից յուրաքանչյուրում կատարվում է համապատասխան նյութի ներբեռնում և ձևավորում: Աշխատանքը կատարվում է ուսուցչի օգնությամբ և առաջարկած նմուշօրինակով (նկ. 1):

Աշխատանքի քննարկումը և հանձնումը կլինի դաս 12-ի վերջին 15-20 րոպեում, գնահատումը կարող է կատարվել տեղում կամ հաջորդ հանդիպման սկզբին:

|  |                 |              |                |                              |  |
|--|-----------------|--------------|----------------|------------------------------|--|
|  <p>Անուն<br/>Ազգանուն<br/>Հայրանուն</p> <p>Մանուկան թիվը<br/>Մանուկապարտ<br/>Հարեմնիքը<br/>Ազգությունը</p> <p>Հասցեն</p> | ԻՄ<br>ՀԱՅՐԵՆԻԹԸ | ԻՄ<br>ՔԱՂԱՔԸ | ԻՄ<br>ԸՆՏԱՆԻԹԸ | ԻՄ ԲԱԿԸ,<br><br>ԻՄ<br>ՓՈՂՈՑԸ | ԻՄ ԴՊՐՈՑԸ<br><br>ԻՄ ԴԱՍԱՐՄԱՆԸ<br><br>ԴԱՍԱԸՆԿԵՐՆԵՐԸ |
|  |                 |              |                |                              |  |

**Նկար 1. Տեղեկագիրք 1 «Արի ծանոթանանք» (նմուշօրինակի 1 և 2 էջերը):**

Հաջորդ թեմաները՝ դաս 13-25-ը, վերաբերում են շրջակա միջավայրին, բույսերին և կենդանիներին:

Անհրաժեշտ են բույսերի և կենդանիների նախապես ընտրված նկարներ: Աշակերտներից յուրաքանչյուրին տալ բույսի կամ կենդանու 1 նկար, կարող է նաև լինել աշակերտի գիտեցածը կամ ընտրածը և մտազրոհի մեթոդով իրականացնել խաղը.

1. Կանգնեն բույսերը:
2. Որո՞նք են ընտանի կենդանիները (Ի՞նչ ձայներ են հանում)
3. Դասասենյակի աջ անկյուն գնան վայրի բույսերը, ձախ՝ մշակովի:
4. Ո՞ր բույսն են ամենաշատը ուտում Հայաստանում:
5. Տարանջատվենք. խոտ, թուփ, ծառ՝ տարբեր բարձրությամբ դիրք ընդունելով (ծառերի նկարներ ունեցողները կանգնում են, թփերինը՝ աթոռներին նստում, իսկ խոտերինը՝ կքանստում):
6. ...և այսպիսի բազում հարցեր, որոնց քանակը սահմանափակվում է միայն ժամանակով, իսկ բովանդակությունը ուսուցչի ընտրությամբ՝ ելնելով թեմայից և դասարանի պատրաստվածությունից:

Խաղի մեթոդով դասը շատ նպատակահարմար է կազմակերպել թեմայի ամփոփման ժամանակ՝ դաս 25-ին: Ցանկալի է գնահատել ամբողջ դասարանին՝ առաջնորդվելով տարբեր գործոններով՝ ամենաարագը, ամենաճիշտը, ամենաակտիվը և այլն: Դա կառաջացնի

մեծ ոգևորություն և հետագայում մասնակցության ավելի մեծ պատրաստակամություն:

Դաս 30-ը անհրաժեշտ է անցկացնել փոքրիկ ներկայացմամբ: Դասարանի սեղաններով ստեղծել խաչմերուկ, դնել լուսացույց և կատարել դերերի բաշխում. հետիոտն (փոքրիկ, աշակերտ, մեծահասակ և այլն), ոստիկան, վարորդներ: Յուրաքանչյուրը, ստանալով իր հանձնարարությունը, սպասում է հրահանգի, որոնք ուսուցիչը կարդում է «Զբոսանք և անվտանգություն» դասի համար գրած իր կազմած փոքրիկ պատմվածքից: Այս խաղին կօժանդակի նաև դպրոցներում առկա «Փոքրիկ ոստիկանը» տեսախաղը:

«...Մենք մեր դասարանով մոտենում ենք Մուշ 2 թաղամասի Գործարանային փողոցի մեծ խաչմերուկին...»: Բարդությունն այն է, որ սցենարը պետք է լինի լավ մշակված, հակրիճ, կոնկրետ, պարզ նախադասություններով, ընդգրկի նախատեսված բոլոր կատարողներին, որը կապահովի հետաքրքրություն, ուշադրություն, երթևեկության կանոնների սերտում և կիրառում: Այս դասի ամփոփումը կլինի էքսկուրսիայի և ամփոփիչ դասերի (դաս 31, 32) ընթացքում:

3-րդ դասարանի առանձնացված թեմաների համար նախատեսված խաղերը արդեն ավելի հեշտ է կազմակերպել՝ ելնելով նախորդ տարվա ձեռք բերված փորձից:

Դաս 1-9-ի համար նախատեսվում է առաջին դասարանում կազմած «Արի ծանոթանանք» տեղեկագրքի II մասի ստեղծումը՝ «Իմ առօրյան», որի հանձնումը և գնահատումը կատարել դաս 18-ի՝ կրկնության դասի ժամանակ:

Ձևը և մոտեցումը նույնն է: Այս անգամ աշակերտը արդեն կուզենա ավելի հազեցած ու բազմակողմանի ներկայանալ.

Ես մենակ չեմ:

Դասընկերներս:

Իմ առօրյան:

Ես սիրում եմ, երբ...

Չեմ սիրում, երբ...

Իմ հետաքրքրությունները:

Այս վերնագրերից յուրաքանչյուրը աշակերտը կլրացնի մինչև կրկնության դասի օրը և և կհանձնի ուսուցչին՝ գնահատման կամ էլ արդյունքների ամփոփման համար: Նշված վերնագրերը պարտադիր չեն, ընտրվում է՝ ելնելով աշակերտների նախասիրությունից, դասարանի ընդհանուր պատրաստվածությունից, բայց պարտադիր 6


կետեր՝ էջերի թվով, «Արի ծանոթանանք» գրքի (գիրք 1) ձևաչափը պահպանելու համար:

Աշխատանքի նկատմամբ հետաքրքրությունը բարձրացնելու համար կարելի է նաև խրախուսական վերաբերմունքի տարբեր մոտեցումներ մտցնել. գեղեցիկ և ճիշտ ձևավորում, ամենահետաքրքիր լուծում և այլն:

10-12 դասերի համար շատ լավ միջոց է ամբողջ դասարանով «Մի կտոր Տիեզերք» ստենդի ստեղծումը: Դասարանում պետք է մի հարմար, լավ տեսանելի տեղում պատին ամրացնել Whatman A1 չափի, մուգ կապույտ գույնի և դասերին վերաբերող ինքնաստանձվող նկարներ՝ աստղեր, ասուպներ, երկնաքարեր, մոլորակներ՝ Արեգակ, Երկիր, Լուսին և այլն: Ուսուցչի օգնությամբ դասից դաս ստեղծել ձեռակերտ տիեզերք: Ոգևորություն առաջացնելու համար աշակերտներին թույլ տալ ունենալ իրենց նկարով աստղ՝ փակցրած նախընտրած տեղում:

Պատի թերթ ստեղծելով՝ կարելի է անցկացնել նաև «Բնությունը տարվա տարբեր եղանակներին» թեմայի դասերը (նկ. 2):

Պատի 2 թերթերի քննարկումը նորից դաս 18-ի ժամանակ: Կարելի է նաև դասղեկի ժամին՝ ներկայացնելով որպես համատեղ դասարանական աշխատանք:



**Նկար 2. Լուսանկար-ցուցահանդես՝ «Տարվա եղանակներին մենք, բույսերն ու կենդանիները» (հերթականությունը պայմանավորված է ուսումնական տարվա եղանակային հերթափոխով):**

4-րդ դասարանի դասագրքում ընդգրկված դասերը պարունակում են գիտական բնույթի մեծածավալ նյութեր՝ տերմիններով ու հասկացություններով հագեցված, որոնց ուսուցումը ուսուցչից հսկայական և բազմաբովանդակ աշխատանք է պահանջում:

Ուսումնադաստիարակչական գործընթացի կարևոր խնդիրներից է դառնում սովորողների տրամաբանական մտածողության ավելի խորացումն ու զարգացումը: Տրամաբանությունը մարզում է սովորողի միտքը, օգնում է նրանց հաղթահարել զանազան արգելքներ:

Աշակերտը ձեռք է բերում հնարամտություն, դժվարին իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, ստեղծագործաբար մտածելու կարողություն, կատարում «հայտնագործություն»: Տրված նյութի յուրացման հետ մեկտեղ ձևավորվում է ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու անհրաժեշտություն: Հենց այս հմտությունները պետք է առավել խորացնել դասընթացի նյութերը մատուցելիս: Առավելություն է նաև ժամաքանակի կրկնապատկումը, պահուստային ժամերի առկայությունը, որոնք կարող են օգտագործվել առանձին թեմաների բազմակողմանի մատուցման համար [2]:

Ելնելով թեմաներից՝ նպատակահարմար է կազմակերպել մի շարք խաղեր, վիկտորինաներ, մրցույթներ, քարտեզով ճանապարհորդություններ, բաց դասեր, նկարչական թեմատիկ ցուցահանդեսներ և այլ միջոցներ: Այս դասերի կազմակերպման աշխատանքներին ավելի հարմար է անդրադառնալ հետագայում առանձին նոր հոդվածով՝ նախատեսված 4-րդ դասարանի թեմաների վերաբերյալ ավելի մանրամասն ներկայացումով: Առայժմ հպանցիկ անդրադարձ կկատարվի նախատեսված հիմնական ուսուցման ձևերին՝ ելնելով դասընթացի թեմաներից:

Այսպես, օրինակ, Երկիր մոլորակը, ռելիեֆի հիմնական ձևերը, մայրցամաքները, օվկիանոսները անցնելիս նպատակահարմար է ընտրել թիմային մրցույթ-խաղի մեթոդը՝ դասերին համապատասխանող հարցերով, նկարելուկներով և այլ բովանդակությամբ փուլերով: Հարցերը պետք է ընդգրկեն նախատեսված ամբողջ թեման, նկարելուկները (ռեբուսներ), վերաբերեն հիմնական տերմիններին և հասկացություններին:

Հետաքրքիր են նաև «Ո՞վ ավելի արագ», «Գուշակիր մայրցամաքը (օվկիանոսը)», «Գտիր կեսը» և այլ փուլերով կազմակերպվող աշխարհագրական խաղ-վիկտորինաների անցկացումը [1]:

Մարմիններ, նյութեր, նրանց բնութագրական հատկանիշներին ծանոթացնել առարկաների ընտրված կույտից՝ ուսուցչի հրահանգին համապատասխան կատարելով խմբավորում:

Տնտեսության, նրա ճյուղերի ու ենթաճյուղերի, օգտակար հանածոների վերաբերյալ դասերին կօգնեն դասարանում ստեղծվող ստենդները:

«Հայաստանն իմ հայրենիքն է» դասերի ամփոփումը կատարել «Կառուցենք Հայաստանը» խաղ-մրցույթով՝ մի քանի փուլով. փոքրիկ բնութագրական քառատողով գտնել մարզը, տեղադրել իր տեղում, ապա տեղադրել նաև մի շարք տեղանուններ կամ դրանց նկարները՝ պատմամշակութային հուշարձանների, նշանավոր մարդկանց, նաև մարզին բնորոշ տնտեսության առավել բնութագրական ճյուղի գործարանի կամ արտադրանքի նկարը և այլն:

Ճանապարհորդություններին վերաբերող թեմաներին կիրառել «Նավապետ-ղեկապետ», «Հետևենք Մագելանին» և այլ նմանատիպ խաղեր՝ կիրառելով նաև համացանցից համապատասխան տեղեկատվություն՝ ճանապարհորդների անցած ուղու քարտեզային պատկերը, նավերի, ճանապարհորդների նկարներ և այլն [1]:

Մարդ-հասարակություն-փոխհարաբերություններ դասերը ամփոփելիս կիրառել թեմատիկ նկարչական ցուցահանդեսի կամ էլ դերային խաղի մեթոդը ուսուցչի կողմից առաջարկվող սցենարով:

Այսքանից հետո, ի մի բերելով խաղի մեթոդի կիրառման անհրաժեշտությունը, պետք է հիշել մեծ մանկավարժների խոսքերը.

«Առանց խաղի չկա և չի կարող լինել լիարժեք մտավոր զարգացում: Խաղը մի հսկա, լուսավոր պատուհան է, որով երեխայի հոգեկան աշխարհն է լցվում շրջակա աշխարհի մասին հասկացությունների, պատկերացումների կենդանի հեղեղը: Խաղը կայծ է, որը հարցասիրության և հետաքրքրության կրակ է վառում»:

Վ. Ա. Սուխոմլինսկի

Խաղի դաստիարակչական նշանակության մասին Մակարենկոն նշում էր, որ երեխան միշտ պետք է խաղա, նույնիսկ եթե կատարում է շատ լուրջ աշխատանք:

Խաղը զարգացնում է երեխայի երևակայությունը, ստեղծագործական կարողությունները, նպաստում ինքնուրույնության ձևավորմանն ու զարգացմանը, ակտիվացնում է ուշադրությունն ու տրամաբանությունը, ընդլայնում է աշխարհայացքը:

Երեխայի խաղն ընթանում է խոսքի ուղեկցմամբ:

Խաղերը նպաստում են ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Դրանք դասը դարձնում են



հետաքրքրաշարժ և ուշագրավ: Ստեղծվում է աշխատանքային տրամադրություն, դյուրին է դառնում գիտելիքների և կարողությունների ձեռքբերման գործընթացը:

Անգնահատելի է ուսումնական խաղերի դերը կրտսեր դպրոցականի ուսումնական գործընթացում, սակայն այն չպետք է գերազնահատել ու դասը վերածել խաղի:

Այսպիսով, շրջակա աշխարհի մասին իմացական բարձր մակարդակի ապահովման համար շատ կարևոր են ճիշտ և տեղին ընտրված մեթոդները, որոնց միջոցով հնարավոր է դառնում նույնիսկ ամենաբարդ և մեծածավալ նյութերը հաղորդել հեշտ ընկալվող և ուշագրավ:

Խաղի մեթոդի ընտրությունը «Ես և շրջակա աշխարհը» դասընթացի ուսուցանումը դարձնում է հենց այդպիսին՝ ստեղծելով կիրառական գիտելիքների պաշարի կուտակման մեծ հնարավորություններ, որոնցով կրտսեր դասարանի աշակերտները էլ ավելի լավ կճանաչեն իրենց շրջակա միջավայրը, կարժևորեն, կպահպանեն ու կսիրեն բնությունը և նրա տված հնարավորությունները:

#### **ПРИМЕНЕНИЕ МЕТОДА ИГРЫ В КУРСЕ «Я И МИР ВОКРУГ МЕНЯ»**

**Налбандян М. Э., Амазян А. Н.**

Предмет «Я и мир вокруг меня», изучаемый во 2-4 классах начальной школы, будет легче усвоить с помощью интерактивных методов обучения, особенно игровым методом. Почти все темы представлены подходящими играми.

**Ключевые слова:** педагогическая игра, метод игры, соревнование, природа, окружающая среда, поверхность, карта, общество, экономика, еда, здоровье, путешествие.

#### **GAME METHOD FOR THE COURSE "ME AND THE WORLD AROUND ME"**

**Nalbandyan M. E., Amazaryan A. N.**

The process of teaching the lesson "Me and the World Around Me" in elementary classes of 2-4 grades will be easier to understand by using interactive teaching methods, particularly the game method. Almost all topics have been presented with corresponding games.

**Keywords:** pedagogical game, game method, competition, nature, environment, surface, map, society, economy, food, health, travel.

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ադամյան Ն. Ջուրը գիտելիքների խաչմերուկում: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան, «Արման Ասմանգուլյան» ԱԶ: 2018թ.: 467 էջ:
2. Ալեքսանյան Լ., Թորոսյան Ն. և ուրիշներ, Կյանքի հմտություններ, Ձեռնարկներ ուսուցիչների համար: 1-5-րդ դասարաններ: «Մակմիլան-Արմենիա»: 2001-2003: 117 էջ:
3. Այվազյան Հ. Դասի կառուցվածքային տարրերի կիրառումը հանրակրթական առարկաների օրվա պլանների կազմման գործընթացում: Երևան, Դպրոց կենտրոնների միություն: 2014: 48 էջ:
4. Աստվածատրյան Մ. և ուրիշներ, Նոր մոտեցումներ ուսուցիչների պատրաստման գործընթացին, Այլընտրանքային մեկնաբանություն: Երևան: «Այոերս»: 2004: 176 էջ:
5. Տարրական դպրոցի «Ես և շրջակա աշխարհը» առարկայի չափորոշիչ և ծրագիր (2-4-րդ դասարաններ): Հոդված N 1, ՀՀ ԿԳ նախարարություն: «Մակմիլան-Արմենիա»: 2012: 80 էջ:
6. Տոդանյան Ն. և ուր. «Ես և շրջակա աշխարհը» 2-4-րդ ուսուցչի ձեռնարկ: Երևան, «ՄԱՆՄԱԸ»: 2013: 79 էջ :
7. Зимняя И. А. Основные направления современного обучения. Педагогическая психология. М.: Логос. 2000. 175 с.
8. Основы психодиагностики. Учебное пособие для студентов педвузов, под общ. редакцией А. Г. Шмелева. Москва. Феникс. 1996. 544 с.
9. <https://zaochnik.com/spravochnik/pedagogika/obschie-osnovy-pedagogiki/ponjatie-igry-v-pedagogike/>:

#### **Տեղեկություններ հեղինակների մասին**

**Նալբանդյան Մ. Է.** - դասվար

23 միջնակարգ դպրոց

Էլ.փոստ՝ [mariam.nalbandyan.1975@gmail.com](mailto:mariam.nalbandyan.1975@gmail.com)

**Ամազարյան Ա. Ն.** - աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Շիրակի պետական համալսարան

Էլ.փոստ՝ [amazaryan.aida@gmail.com](mailto:amazaryan.aida@gmail.com)

Տրվել է խմբագրություն 05.05.2020